274

1. Թող զիս լուսավորե
Փառքը Տեր Հիսուսի,
Անոր սրբությունն ու սերը
Հիանալի:

Տեր Հիսուսին ի՞նչ նվիրեմ,
Որ կյանքն ինձ տվավ,
Իմ սերը ինչպե՞ս ցուցնեմ,
Որ տեղս մեռավ:

2. Այս մեղքի աշխարհում, ավա՛ղ,
Կույր էի եղել,
Բայց գտավ զիս Հիսուսն այսօր
Կործանման տեղեն:

3. Իմ միտքս տամ Տեր Հիսուսին,
Խորհուրդներս բոլոր՝
Անոր ճշմարտության խոսքին
Զիս նվիրելով:

4. Ժամանակս տամ Հիսուսին՝
Հետևեմ Անոր,
Թող բոլոր օրերս լեցվին
Օգտակար գործով:

5. Հիմա պիտ Քեզի ծառայեմ
Հոգով և սրտով,
Իմ կյանքս Քեզի նվիրեմ
Ու ապրեմ Քեզմով:

Պատրաստված է Հոգևոր Արխիվի Կողմից | hogevorarchive.com | ergaran.com | 2025